

բաժանումը կատարուած էր տեղական ծէսերու համաձայն, ինչպէս նոյն ժամանակի միւս եկեղեցիները. կողակը կը պարուհնակէր եպիսկոպոսին աթոռը և քահանայից նստարանը, կիսաշրջանակային պատին դէմ յարմարցուած. սեղանը յարդարուած էր այն մեծ կամարին տակ որ կը բանար կողակի կոնքը (conque), արեւելեան կողմը բարձրը շինուած էր ամպիոնը, դասին մէջ կային երգեցիկներու նստարանները, վերջապէս ատեանը (naos) ուր կը հաւաքուէին պարզ հաւատացեալները: Ինչպէս տմէն տեղ, հոս ալ գլխաւոր դուռը կը կոչուէր Թագաւորական Դուռն. այս դրան երկու կողմը, դահլիճին մէջ կը պահուէին մասուէնքները: Հարաւային տաղուարը, ինչպէս նախընթաց շրջանին, յատկացուած էր Փրկչին յիշատակներուն և հիւսիսայինը՝ Ս. Կուսին:

21 Մարտ 628ին Հերակլ յաղթականօրէն Երուսաղէմ կը բերէր Խաչին նշանաւոր մասուէնքը զոր Պարսիկները 614ին յափըշտակած էին: Փղշտացոց մօտ պաշտպանուած տապանակին նըման մասուէնքը կը վերադարձնէն տակաւին կնքուած մնացած սնտուկովը. և բանաստեղծն Սոփրոնիոս որ իր քերթուածներուն մէջ անոր փառաշուք վերադարձը ներբողած էր, խանդավառութեամբ կը փութայ երթալու Մատուռը, մեծարելու համար զայն: Ս. Քաղաքը իսկոյն կը զրկուի այս գանձէն, եթէ պէտք է հաւատալ ժամանակագիր Թէոփանէսի, 633ին, կը գրէ ան. Հերակլ արաբական արշաւանքներու ենթարկուելով՝ կենաց փայտը Պոլիս փոխադրեց, վերջնականապէս լքելով Սիւրիան: Այս տեղեկութիւնը կը թուի հաստատել Երուսաղէմի մէջ Խաչին ներկայութեան վրայ Արգուլֆ եպս. ին լռութիւնը և Բիւզանդիոնի մէջ ճշմարիտ Խաչին երեք մասուէնքներուն յիշատակութիւնը: Մին հոն կը գտնուէր Կոստանդիանոսի օրերէն, երկրորդը 374ին Արամիայէն ստացուած, երրորդն էր Երուսաղէմինը: Այս թուականէն յետոյ Ս. Քաղաքը կ'օժտուի դարձեալ նշանաւոր մասուէնքով մը. և այս ըստ բաւականի կ'ապացուցուի Վերացման խաչին արարողութեամբ, իններորդ դարուն Խաչի պահպանի մը գոյութեամբ, Աւագ ուրբաթ օրը, թանկագին Խաչին պաշտամունքովը: Հերակլի մեկնումէն յետոյ, կը թուի թէ Խաչին մասուէնքը չէր ցուցադրուէր հաւատացելոց մասնաւոր երկրպագութեան: Մատուռին վերի յարկին մէջ կը պահուէին եղէգը, Ս. Գեղարդը, յետոյ աւելի ուշ, քացախին և լեղւոյն բաժակը: